Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անուն, ազգանուն**
   ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ

2. **Զբաղեցրած պաշտոնը**
   ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**
   քաղաք Դոնի Ռոստով և քաղաք Տագանռոգ, Ռուսաստանի Դաշնություն,
   2019 թվականի հուլիսի 17-19

4. **Հրավիրող կողմը**
   ‘‘Ազիմուտ” ավիաընկերության ղեկավարություն

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

   անցկացնել քննարկումներ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության Ռոստովի մարզի միջև ուղևորահոսքի ծավալների ավելացման և օդային փոխադրումների ծավալների մեծացման հետ:

6. **Քննարկված թեմաները**

   ”Ազիմուտ” ավիաընկերության ղեկավարության հետ քննարկվել է մոտ ապագայում գործող թռիչքների քանակի ավելացման, ինչպես նաև թռիչքների աշխարհագրության ընդլայնման հարցը:
   Ռոստով քաղաքի քաղաքացիական ավիացիայի ռեգիոնալ վարչության պետ՝ Վյաչիսլավ Օնոֆրիենկոյի հետ քննարկվել է հայկական ավիափոխադրողների համար ռուսական օդային տարածքով թռիչքներ իրականացնելու աէրոնավիգացիոն սպասարկման սակագների նվազեցման հարցը:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

   Հանդիպում է տեղի ունեցել ”ԻԼ” Հասարակական Բաժնետիրական Ընկերության գլխավոր տնօրեն Յուրի Գրուդինինի հետ, որի ժամանակ քննարկվել են Ռուսաստանի Դաշնությունում գործող ավիաշինարարական և ավիավերանորոգման գործարանների պատվերով Հայաստանի տարածքում ինքնաթիռների պահեստամասերի արտադրություն հիմնելու հնարավորությունները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպում է տեղի ունեցել նաև Մոսկվայի ավիացիոն ինստիտուտի Դոնի Ռոստովի մասնաճյուղի ղեկավարության հետ, որի ընթացքում ձեռք է բերվել պայմանավորվածություն 10 անվճար տեղ հատկացնել Հայաստանի քաղաքացիներին՝ վերոհիշյալ ինստիտուտում ուսանելու, ինչպես նաև ուսանողներին կրթաթոշակ տրամադրելու վերաբերյալ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

"Ազիմուտ" ավիաընկերության հետ ձեռք է բերվել համաձայնություն աշուն-ձմեռ նավիգացիոն շրջանում պահպանելու շաբաթական 12 չվերթ հաճախականությունը, ինչպես նաև 2020 թվականից փուլ առ փուլ ընդլայնել թռիչքների աշխարհագրությունը՝ հասցնելով 10 ուղղության, որոնցից 7-ը՝ նոր ուղղություններ են լինելու:

"Ազիմուտ" ավիաընկերությունը նախատեսում է Զվարթնոց օդանավակայանի տարածքում ստեղծել նոր տեխնիկական բազա "SSJ100" ինքնաթիռների տեխնիկական սպասարկումն իրականացնելու նպատակով, ինչպես նաև վերապատրաստել հայ օդաչուներին՝ ստեղծելով հնարավորություններ հայկական ավիացիոն շուկայի զարգացման պահանջներն ապահովելու համար:

X _____

10. _____

_____

ստորագրությունը, ամսաթիվը